

ՀԱՂՈՐԴՈՒԹՄԵՐ

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՄԻ ՇՈՒՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Միքայել Նալբանդյանին վերաբերող ամեն մի նորահայտություն նշանակալից է նրա կյանքի ու ունեցություն գործունեության հարցերն ավելի խորն ու ճշգրտորեն լուծելու տեսակետից,

Սովետական շրջանում հայտնաբերվել են Մ. Նալբանդյանի գրչին պատկանող մի շարք ստեղծագործություններ, բավական շատ փաստեր ու տվյալներ, որոնք ավելի պարզորոշ են դարձնում հայ մեծ ունեցություն-գեմոկրատի հարուստ կյանքն ու բազմաբովանդակ գործունեությունը:

Սակայն նույնը չի կարելի ասել որոշ հոգվածների մասին, որոնք, իբրև «նորահայտություններ», առանձին գրականագետներ վերագրում են Մ. Նալբանդյանին, առանց լուրջ հիմնավորման:

Դրանցից մեկը «Հոռոմեական նամակ» կոչված հոգվածն է, որը նախ՝ Ալֆոնզո Ռաթթի ստորագրությամբ լույս է տեսել «Հյուսիսսփյալի» 1861 թվականի 10-րդ ամսատետրակում և ապա՝ մոտ 90 տարուց հետո տեղ գտել Միքայել Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» մեջ¹:

Այն, ըստ կոթյան, խղճուկ բովանդակությամբ ու մանվածապատ լեզվով գրված սի հոգված է, որտեղ ամբողջապես բացակայում է Մ. Նալբանդյանի բոցաշունչ քննադատության ոգին:

Չնայած դրան, երկերի կոմենտարներն ու ծանոթագրությունները կազմող ընկ. Ն. Մուրադյանը գտնում է, որ «Հոռոմեական նամակը» կարող է լինել միայն «Նալբանդյանի գրչի գույծ», որովհետև այդտեղ տրված է «Ներսիսյան դպրոցում տեղի ունեցած անցքերի» «խոր վերլուծությունը» և «հասարակական մի շարք խնդիրների» «արժատական քննադատությունը»²:

Իրականում «Հոռոմեական նամակի» հեղինակը ոչ թե անդամ ներկայացված անձանց՝ կարգիներ, խորհրդական անդամի, քարտուղարի, վերակուցուի օգնականների, շերամապահի, հոգատարների և մյուսների, հասարակական գործունեության բնութագիրն է տալիս, այլ մեղկ կերպով վերապատմում է նրանց՝ միմյանց դեմ լարած մեքենայությունները և մանր-մունր գժտությունները:

Հասկանալի է, որ այդպիսի «քննադատությամբ» Նալբանդյանը ոչ մի դեպքում հանդես չէր չլր կարող, այն չէ՝ 1861 թվականին, որը հատկանշական է թե՛ արտասահմանում գտնվող պեմոկրատների հետ սերտ կապեր ստեղծելու, թե՛ ուսակցիայի, կղերականության և դրանց պարագլուխներ Գ. Ալվազովսկու և Հ. Չամուռնյանի դեմ անողոր պայքար մղելու և թե՛ ժամանակի հրատապ հարցերին լուրջ պատասխան տալու տեսակետից:

Նման պայմաններում բնական է, որ Նալբանդյանը ոչ միայն հանդես չէր գա որևէ հոգվածով, այլև մտաբերել անգամ չէր կարող Ներսիսյան դպրոցում տեղի ունեցած դեպքերը, պահպանողական Պ. Շանշյանի և նրա հակառակորդների միջև եղած ընդհարումները, և դա հատկապես այն պատճառով, որ դրանք կատարվել էին անցյալում՝ Պ. Շանշյանի տեսության շրջանում (1851—1857) և շունչին որևէ ակտուալություն հետագայում, ասենք, Թիֆլիսում Նալբանդյանի գտնված ժամանակ՝ 1860 թվականին:

Արքեպիսկոպոս Ս. Ջալալյանը 1861 թվականին Մատթեոս կաթողիկոսին ուղղած իր մի նամակում Ներսիսյան դպրոցում եղած երբեմնի անհամաձայնությունների միակ պատճառը համարում է Շանշյանին, գտնելով, որ վերջինս վնասակար ձևով էր տանում կրոնագիտության և առավածարանության ճանաչողական դասատվությունը», որի համար էլ, երբ առաջարկվում է նրան «միայն տեսուչ լինել», նա հրաժարվում է իր պաշտոնից³:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 364—369:

² Նույն տեղում, էջ 445:

³ Մելիսեղեկ Լուկա. Մուրադյան, Պետրոս Շանշյանց, Թիֆլիս, 1898, էջ 58:

Եվ ահա պատահում է այնպես, որ նույն այդ նամակը ընկնում է Պ. Շանշյանի ձեռքը, և նա էլ իր հերթին, 1861 թվականի հոկտեմբերի 21-ին ներկայացնում է կաթողիկոսին մի երկարաշունչ բացատրագիր, որտեղ, ի դեպ, ասում է. «Ահա երեք տարի է, որ հեռու հայրենիքից, հանգիստ մնում եմ խորին լուռության մեջ. թույլ տալով, որ անցնին Հայոց ուսումնարանի վրա բարձրացած կրթերի մրրիկներն: Եվ այժմ ես չէի ընդհատի այս իմ լուռությունը, եթե ձեռն չհասաներ Սարգիս Արքեպիսկոպոսի նամակի պատճենը, որը՝ ուղարկած էր Ձերդ վեհափառության ի 4-ն հուլիսի 1861 ամի, ընդ համարավ 133, որո մեջ նաղարյանցի գրյանց արգիլման պատճառն էջմիածնի Սինոդից, գրում է ս. եպիսկոպոսն այս հետևյալ խոսքերով...»¹

Այստեղից պարզ է, որ «Հոռոմեական նամակը» ոչ այլ ինչ է, եթե ոչ Շանշյանի լուռության ընդհատման մի այլ կոնկրետ արտահայտությունը. այդ են հաստատում «Հոռոմեական նամակի» և վերոհիշյալ բացատրագրի մեջ արտահայտված շատ մտքերի, այլև լեզվի ու ոճի նույնությունը, մեկի գրության և մյուսի տպագրության ժամանակաշրջանի համապատասխանությունը և այլն: Որ թև՝ մեկի և թե՛ մյուսի միջև ընդհանրությունը ակնհայտ է, չի ժխտում նաև ընկ. Ն. Մուրադյանը. բայց դրա հիման վրա նա ո՛չ թե «Հոռոմեական նամակը» դիտում է իրրև Շանշյանի ստեղծագործություն, այլ գտնում է, որ նալրանդյանի «այդ նամակի» մի շարք «տողերը համարյա բառացի համընկնում են Շանշյանի» բացատրագրի որոշ տողերին²,

Այդ «համընկնումը», սակայն, ո՛չ թե «Հոռոմեական նամակը» նալրանդյանին վերագրելու փաստարկ է, այլ փայլուն ապացույց այն բանի, որ ինչպես Շանշյանի 1861 թ. հոկտեմբերի 21-ի բացատրագիրը, այնպես էլ «Հոռոմեական նամակը» Ս. Զալալյանի գրած նամակի պատասխանն ու յուրօրինակ արձագանքն է և ոչնչով չի առնչվում նալրանդյանի հետ, որը այդ ժամանակ գտնվում էր հեռավոր Հնդկաստանում:

Որ «Հոռոմեական նամակը» նալրանդյանինը չէ, երևում է նաև այդ շրջանում նրա գրած աշխատությունների ու հոդվածների բնույթից և դրանց մեջ արտահայտված գաղափարներից. թե՛ «Շիշատակարանի» վերջին մասերը, «Հրաշափառ խայտառակությունը» և «Նամակ «Մեղվի» խմբագրին» հոդվածը (1860), թե՛ «Երկու տող» պամֆլետը (1861) և թե՛ նշանավոր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը (1862) օրգանապես կապված են միմյանց, մեկը մյուսի անմիջական զարգացումն է և նալրանդյանի ուսուցիչին-դեմոկրատական հայացքների զարգացման մի նոր աստիճանը:

Մինչդեռ մենք նույնը չենք տեսնում «Հոռոմեական նամակի» մեջ և հետևաբար կարծել, թե այնտեղ արտահայտված են նալրանդյանական գաղափարներ, թե այնտեղ առկա է նալրանդյանական քննադատությունը, սխալ է և զուրկ որևէ հիմքից:

Թույլ է նաև ընկ. Ն. Մուրադյանի մյուս փաստարկը, թե նամակի «հեղինակը» ոչ միայն գիտե Կոմս էմմանուելին, այլև ծանոթ է այն նոր հարաբերությունը, որ ստեղծվել է նրա և «Հյուսիսսփայլի» միջև»³:

Նախ՝ նալրանդյանն ինչպես իր գաղափարակիցների, այնպես էլ հակառակորդների շրջանում քաջ ճանաչված էր նաև Կոմս էմմանուել անունով և երկրորդ՝ «նրա և «Հյուսիսսփայլի» միջև» ստեղծված նոր հարաբերությունը միայն նալրանդյանը չէր «ծանոթ», այլև այդ մասին տեղյակ էին թե՛ նրա բարեկամները և թե՛ հակառակորդները:

Ավելին՝ նալրանդյանը իր ժամանակին ինչպե՛ս իսկական, այնպե՛ս էլ Կոմս էմմանուել անունով այնքան էր հայտնի հասարակական լայն շրջաններին, որ շատերն էին ընդօրինակում նրան, նրա պես հանդես դալիս «շինովի» ստորագրություններով, հոդվածներ գրում առ Կոմս էմմանուելը:

Պետք է ասել, որ «Հոռոմեական նամակի» մեջ գործ են ածված նման մի քանի մոմենտներ, որոնց հեղինակը դիմել է իր հակառակորդներին հայտնի չդառնալու նկատառումով և հենց դրա համար էլ հոդվածի գրելու տեղը դարձրել է Հոռոմը, կատարված անցքերի վայրը՝ Հյուսիսսփայլի Ամերիկան, իսկ Հնդկաստանն էլ՝ ճամբորդած հերոսի հանգրվանը, ուր նա սկսում է պատմել «գործարանի (Ներսիսյան դպրոցի — Ա. Մ.) մեջ եղած անցքերը»⁴, «Հոռոմեական նամակը» նալրանդյանին վերագրելու համար բերվում են նաև «արտաքին հանգամանքներ», թե «նամակը գրված է իրրև թե՛ Հոռոմից 1861 թ. մարտի 20-ին: Եթե «Հյուսիսսփայլի» աշխատակիցներից կալ մեկը, որ այդ ժամանակ կարող էր լինել Հոռոմում կամ Հոռոմի մոտ, — ապա»

¹ Մեկիսեղեկ եպիս. Մուրադյան, Պետրոս Շանշյանց, Թիֆլիս, 1898, էջ 36:

² Մ. Նալլանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 447:

³ Նույն տեղում, էջ 445—446:

⁴ Նույն տեղում, էջ 370:

դարձյալ Նալբանդյանն է դա: Կենսագրական մի շարք մանրամասներ կգտնի ուշադիր ընթերցողը նամակի առաջին էջերում»¹:

Այնինչ իրականությունը այն է, որ 1861 թ. մարտի 20-ին Նալբանդյանը ո՛չ Հոռոմ էր և ո՛չ էլ Հոռոմի մոտ, այլ 3 ամիս առաջ թողած լինելով այն՝ գտնվում էր Փարիզում և զբաղված էր նշանավոր «Երկու տողը» գրելով², նշանակում է այդ փաստարկը ևս ոչնչով համոզվել և նույնքան զուրկ է հիմքից, որքան՝ առաջին երկուսը:

Նույնը պիտի ասել նաև վերջին և ամենակարևոր» փաստարկի վերաբերյալ. այդ փաստարկի համաձայն՝ «Հոռոմեական նամակի» հենց առաջին պարբերությունից իբրև թե «իրեն հզացնել է տալիս» «Նալբանդյանի ինքնատիպ, անկրկնելի լեզուն և ոճը»³:

Իրականում, Մ. Նալբանդյանի և «Հոռոմեական նամակի» լեզվի և ոճի միջև չկա ոչ մեքնդհանրություն: Եթե Մ. Նալբանդյանի լեզուն կենդանի է ու պարզ, ոճը՝ սեղմ ու հմայիչ, ապա «Հոռոմեական նամակի» լեզուն, ընդհակառակը, ճապաղ է ու ձգձգված, ոճը՝ ճոռոմ ա վերամբարձ:

Նալբանդյանին ընդհանրապես հատուկ է մտքերը սեղմ ձևով արտահայտելը. նա չի սիրում ազնվորդ ու անտեղի կրկնություններ և ամենուրեք կիրառում է «ավելի քիչ խոսքով» «նույն բանը» «իմացնելու» իր իսկ դավանած սկզբունքը: Այնինչ նալբանդյանական լեզվի այդ հատկանշական կողմը ամբողջապես խախտված է «Հոռոմեական նամակի» մեջ, և հենց այդ պատճառով էլ այնտեղ հսկա տեղ են բռնում անհարկի ու անիմաստ կրկնությունները, որոնցից բավական է նշել, միայն, պատմվելիք նյութին վերաբերող բազմաթիվ հիշեցումներից մի քանիսը. «Իմ պատմությունը շատ երկար կլինի, եթե մի ըստ միոջե ձեզ ասեմ» (էջ 369), «Բայց որովհետև կամենում եք խմանալ, ձեր սիրտը շարժելու համար կասեմ ձեզ մի քանի խոսքեր» (էջ 369), «Այժմ ես մի նոր անցք պատմեմ, որ պատահեց Հյուսիսային Ամերիկայում» (էջ 369), «Այդ գործարանի մեջ եղած անցքերը ահա պատմեմ քեզ երեք շրջանով» (էջ 370), «Բայց բանի էությունը քեզ լավ հասկացնելու համար, այդ խնդիրը թող մի փոքր քրքրեմ այստեղ» (էջ 372), «Սորա վերակացություն ժամանակը շատ մեծամեծ անցքեր անցան, որ կպատմեմ, եթե առանց ձանձրության կլսեք» (էջ 373) և այլն և այլն:

Այնուհետև՝ շպետք է մոռանալ, որ Նալբանդյանը աչքի է ընկնում ինչպես գեղարվեստական, այնպես էլ հրապարակախոսական խոսքի ուժգնությամբ, բովանդակալից նախադասություններ կառուցելու հմտությամբ, հարուստ բառապաշարով և բառերը նախադասության մեջ տեղին ու դիպուկ գործածելու բացառիկ շնորհքով. նրա «Նամակ «Մեղվի» խմբագրին» (1860), «Երկու տող» (1861), «Ազգային թատրոն Պուսի մեջ» (1861) ստեղծագործությունները հանդիսանում են այդ բանի փայլուն ապացույցը: Մինչդեռ «Հոռոմեական նամակում» մենք բոլորովին հակառակ պատկերն ենք տեսնում. այնտեղ նույնպես մեծ տեղ են բռնում խճճված նախադասությունները, մակդիրների ոչ տեղին գործածությունները. օրինակ «Մշտնջենավոր» բառը հոգվածուգիրը գործ է ածում մի շարք տեղեղ, այն էլ մեծ մասամբ ավելորդ կամ անտեղի. «Մշտնջենավոր կամար» (էջ 365), «Մշտնջենավոր սյունները» (էջ 365), «Մշտնջենավոր օվկիանոսումը» (էջ 368), «Մշտնջենավոր կեսարին» (էջ 371), «Մշտնջենավոր հերոսը» (էջ 380) և այլն:

Ոչ մի ընդհանուր բան չկա նաև Նալբանդյանի և «Հոռոմեական նամակի» ոճի միջև: Ոճը, իբրև անհատականության հետ կապված իրողություն, հստակ է միայն տվյալ հեղինակին. ուստի եթե միևնույն հեղինակի ստեղծագործությունների համար այն ընդհանուր է, ապա տարբեր հեղինակների համար երբեք էլ ընդհանուր լինել չի կարող: Եվ հենց դա է պատճառը, որ ոճի հիման վրա հնարավոր է դառնում պարզել այս կամ այն ստեղծագործության մեզ անհայտ հեղինակի ով լինելը, ինչպես որ հենց ինքը Նալբանդյանը. «Մեղադրություն ստախոս արևղաներին» թղթի ոճը նույնը համարելով «Փարպեցու պատմության ոճի հետ», ապացուցեց, որ այն «Փարպեցու գրչիցն է դուրս եկած»:

Մի շարք «մանրուքներ» ևս հաստատում են «Հոռոմեական նամակը» Նալբանդյանին պատկանելը: Այսպես՝ 1860 թ. սկսած Մ. Նալբանդյանը հարկադրական եղանակը իբրև կանոն կազմում է «պիտի» եղանակիչով. նրան խորթ է պետք է» ձևը, իսկ «պիտի է» հին ձևն էլ

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 416:

² Տես Ա. Իճևիկյան, Միքայիլ Նալբանդյանի կյանքի և գործունեության տարբերություններ, Երևան, 1954, էջ 156—167:

³ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 446:

գործ է ածում միայն մասնակի դեպքերում՝ ժխտական խոնարհման ժամանակ, Եվ հենց դրանով է բացատրվում, որ «Նամակ «Մեղվի» խմբագրին», «Երկու տող» և «Ազգային թատրոն Պոլսի մեջ» հոդվածներում տեղ գտած հարկադրական եղանակի բայաձևերը (դրանց թիվը հասնում է մոտ 50-ի) կազմված են «պիտի» եղանակիչով, մինչդեռ «Հոռոմեական նամակի» մեջ եղած հարկադրական եղանակի բայաձևերը հիմնականում (27-ից 22-ը) կազմված են «պետք է» եղանակիչով:

Այնուհետև՝ Լթե Նալբանդյանի վերոհիշյալ հոդվածներում գործ է ածված միայն «ընդդեմ» կապը, այն է՝ ետադաս կիրառությամբ («պարբերության ընդդեմ», «անօրենությունների ընդդեմ», «քո ընդդեմ», «օրենքի ընդդեմ» և այլն), ապա «Հոռոմեական նամակում» մեծ տեղ է բռնում նրա համանիշի՝ «դեմ» կապի գործածությունը («Կարդինալի դեմ», «նոցա դեմ», «ճշմարտության դեմ» և այլն), որպիսի հանգամանքն էլ ցույց է տալիս, որ, իրոք, «Հոռոմեական նամակը» Նալբանդյանի գրչի գործ չէ:

Կամ մի՞թե այդ մասին չէ վկայում այն փաստը, որ թե՛ 1861 թվականին և թե՛ դրանից առաջ ու հետո Նալբանդյանը գործ է ածում «Հոռով» և «Հոռովեական» ձևերը¹, մինչդեռ «Հոռոմեական նամակում», ընդհակառակը, տեղ են գտել «Հոռոմ» և «հոռոմեական» ձևերը:

Մ. Նալբանդյանի և «Հոռոմեական նամակի» լեզվի ու ոճի արմատական տարբերությունը կարելի է ապացուցել մի շարք այլ փաստերով. սակայն եղածն էլ արդեն ցույց է տալիս, որ «Հոռոմեական նամակը» չի պատկանում Նալբանդյանի գրչին:

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

¹ ՏԵՍ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 75, 83, 84, 306. հատ. 3, էջ 122 և այլն: